ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 093 754 000,
էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

04.10.2016թ.
300-ի 7

Մալաթիա-Սեբաստիա
վարչական շրջանի ղեկավար
պարոն Արտակ Ալեքսանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ալեքսանյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1 Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում տասնչորս տարին չլրացած քանի՞ անչափահասի նկատմամբ է սահմանվել խնամակալություն 2016թ.-ի ընթացքում:
2. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում անգործունակ ճանաչված քանի՞ քաղաքացու նկատմամբ է սահմանվել խնամակալություն 2016թ.-ի ընթացքում:
3. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում առանց ծնողական խնամքի մնացած քանի՞ երեխա կա:
4. 2016թ.-ի ընթացքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում քանի՞ երեխայի տեղավորման հարց է լուծվել:
5. 2016թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում քանի՞ երեխայի տեղավորման հարց է առկա:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան